Այնուհետև, դէպքերն ստացան գահավէժ ընթացք։ Բաքուի հայ և ադրբէջանցի կոմունիստները պատուիրակութիւն ուղարկեցին Մոսկուա, պահանջելու համար, որ խորհրդային իշխանութիւնը պայման չկնքի «դաշնակ» Հայաստանի հետ։ Միւս կողմից, Ադրբէջանի Յեղկոմը 11րդ բանակի օգնութեամբ միջոցներ ձեռք առաւ՝ կանխելու համար Նախիջևանի դրաւումը հայերից։ Յուլ. 5-ին 11րդ բանակի մասերը մտան Գորիս և հետզհետէ առաջ անցան մինչև Դարալագեազի սահմանները։ Մի ճիւաւոր գունդ շտապեց Նախիջևան։ Օգոս. 1-ին Դրօի զօրամասը Դարալագեազից դիմեց հակայարձակման և յետ դրաւեց ամբողջ Զանգեզուրը։ Բոլշևիկները փախան խուճապահար՝ անլուր վայրագութիւններ գործելով ճանապարհին։ Այդ դէպքերի ժամանակ էր, որ սպանուեցին Վ. Խորէնին, Ա. Շիրինեանը, Սաքօն և բազմաթիւ ուրիշ տեղական գործիչներ։ Նոր ուժեր ստանալով՝ բոլշևիկները վերադարձան, նորից գրաւեցին Գորիսը և անցան Հանքերի կողմը, ուր, երեք շաբաթուայ յամառ կռիւներից յետոյ, գրաւեցին ամբողջ Ղափանը։ Ազատ մնաց միայն Արևիքը։ Հայաստանի զօրքերը հեռացան Զանգեզուրից։ Գ. Նժդեհը միայն մի խումբ մարտիկներով մնաց լեռներում։ Այսպիսով, Ղարաբաղ—Զանգեզուրը անցաւ խորհրդային իշխանութեան ձեռքը, և բոլշևիկ ու հայ զօրամասերի միջև կռիւներ սկսուեցին Նախիջևանի ճակատում։

Յուլ. մէկին Զիչերինը հեռագրեց Հայաստանի կառավարութեան, որ առաջարկում է բանակցութիւնները տեղափոխել Երևան և այդ նպատակով Մոսկուայից մեկնում է ընկ. Լեգրանը։ Վարչապետ Օհանջանեանը պատասխանեց, որ ինքը դէմ չէ այդ առաջարկին, բայց բանակցութիւնները կարող են սկսուել Շանթի պատուիրակութեան վերադարձից յետոյ։

Յուլ. 20-ին, Խալիլ փաշայի ընկերակցութեամբ, Լեգրանը հասաւ Բաքու և Ադրբէջանի կոմունիստների հետ խորհրդակցելուց յետոյ անցաւ Թիֆլիս, ուր, օգոստոսի սկզբին Զանգեզուրում, Նախիջևանում և Ղազախում տեղի ունեցող հայ-բոլշևիկեան կռիւները դադարեցնելու նպատակով դիմաւորեց խորհրդաժողով Հայաստանի ներկայացուցիչներ՝ Ա. Զամալեանի ու Ա. Բաբալեանի և Լեգրանի միջև և օգոս. 10-ին ստորագրուեց հաշտութեան համաձայնագիր, որով օգոստոս 10-ը ժամը 12-ից սկսած վերջ էին դնում պատերազմական գործողութիւնները խորհրդային Ռուսաստանի և Հայաստանի միջև։ Հայաստանի զօրքերը դրաւելու էին Շահթախթ—Խոկ—Ադնաբերդ—Սուլթանբէդ և ապա Քիւկիից հիւսիս և Բագարչայից արևելք անցնող գիծը, իսկ Ղազախի շրջանում՝ այն գիծը, որ բռնում էին յուլիս 30-ին։ Խորհրդային Ռուսաստանի զօրքերը պիտի դրաւէին Ղարաբաղ, Զանգեզուր, Նախիջևան շրջանները։ Այս դրաւումով չէր նախորոշւում այդ դաւառների վերջնական պատկանելիութիւնը. այդ հարցը պիտի որոշէր Խորհրդային Ռուսաստանի և Հայաստանի միջև կնքուելիք դաշնագրով։